ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ ԵՐԵՄՅԱՆ

Հայ ժողովրդի համար այս ծանր փորձությունների ժամանակ մեծ կորուստ էր հայագիտության նահապետ, ակադեմիկոս, գիտական-պատմաբան, ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Սուրեն Տիգրանի Երեմյանի կյանքից հեռանալը։ Նրա ապրած կյանքը մի ամբողջ դարաշրջան էր։ Հայրենի պատմագիտության համար դժվարին տարիներին նա կարողացավ անմար պահել հայ պատմագրության լավագույն ավանդույթները և ուժերի ներածին չափով նպաստել հայոց հին և միջնադարյան պատմության հետազոտությունը ամուր հիմքերի վրա դնելու գործին։ Ակադեմիկոսներ Հակոբ Մանանդյանի, Նիկողայոս Մառի և Հովսեփ Օրբելու մեծատաղանդ աշակերտը կարողացավ հիմնավորապես պահպանել և իր սաներին փոխանցել հայագիտության և արևելագիտության դասական ավանդույթները։

Սուրեն Տիգրանի Երեմյանը ծնվել է 1908 թ. ապրիլի 10-ին, Թբիլիսիում, արհեստավորի ընտանիքում։ Դպրոցում սովորելու վերջին տարիներին զբաղվեցին Սուրեն Երեմյանի հակումները պատմության և պատմական աշխարհագրության նկատմամբ։ 1928 թ., ավարտելով միջնակարգ դպրոցը, նա ընդունվում է Երևանի պետհամալսարանի պատմագիտական ֆակուլտետը։ Արդեն ուսանողական տարիներին դրսևորվում է Ս. Երեմյանի հետազոտական ձիրքը։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը բարձր գնահատեց նրա գիտական առաջին աշխատանքը («IV դարի Անգրկովկասյան առևտրական ուղիները ըստ «Պետինդերյան քարտեզի»)։ Համալսարանում ուսանելու վերջին տարում Ս. Երեմյանը մասնակցում է հին Վաղարշապատի պեղումներին։ Գիտության բնագավառում կատարած այս առաջին քայլերը անջնջելի հետք թողեցին երիտասարդ Ս. Երեմյանի վրա, և հետագայում նա մեծ ջերմությամբ էր հիշում այդ տարիների իր տպավորությունների մասին։

1932 թ. Ս. Երեմյանը ընդունվում է նախկին ԽՍՀՄ ԳԱ Անդրկովկասյան մասնաճյուղի կովկասագիտական ինստիտուտի ասպիրանտուրան և իր ուսումը շարունակում ակադեմիկոս Նիկողայոս Մառի մոտ։ 1935 թ. Կովկասագիտության ինստիտուտի երիտասարդ մասնագետ Ս. Երեմյանը գործուղվում է Ս. Պետերբուրգ, ԳԱ արևելագիտության ինստիտուտ։ Նույն թվականին նա այստեղ հաջողությամբ պաշտպանում է «Քարթլիի (Արևելյան Վրաստան) ֆեոդալական կազմավորումները մարզպանական շրջանում» թեմայով դիսերտացիան և

ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։ Երիտասարդ գիտաշխատող Ս. Երեմյանը հաջողությամբ իրականացրեց իրեն հանձնարարված Հայաստանի և Աղվանքի պատմությանը նվիրված բաժնի շարադրանքը «ԽՍՀՄ պատմություն» բազմահատորյակի համար։

Գիտական աշխատանքին զուգահեռ, Ս. Երեմյանը Ս. Պետերբուրգում 1935 թ. սկսում է իր մանկավարժական գործունեությունը՝ պետական համալսարանի պատմության և բանասիրության ֆակուլտետներում զասավանդելով հայ ժողովրդի պատմություն։

Նախկին ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ստեղծումով Ս. Երեմյանը 1941 թ. մար-

տին տեղափոխվում է Երևան և իր գիտական գործունեությունը կապում Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի հետ։ 1953 թ. նա պաշտպանում է դոկտորական դիսերտացիա «Հին Հայաստանի ստրկատիրական հասարակարգը» թեմայով։ Բարձր գնահատելով Ս. Երեմյանի այս մենագրությունը՝ նշանավոր գիտնական, ակադեմիկոս Վ. Ստրուվեն մասնավորապես նշել է. «Պատմական քարտեզագրությունը գիտության այն բնագավառն է, ուր Ս. Երեմյանը իրեն դրսևորել է որպես առաջնակարգ մասնագետ։ Հայաստանի և Անդրկովկասի պատմական աշխարհագրության բնագավառի խոշորագույն մասնագետներից մեկն է նա։ Նրան են պատկանում Հայաստանի և Անդրկովկասի մյուս երկրների (Վիրք և Աղվանք—է. Դ.) պատմությանը վերաբերող բազմաթիվ քարտեզներ։ Նրա հեղինակությամբ հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» պատմական ատլասը (Երևան, 1952) արժանի է բարձրագույն գնահատականի։ Այդ ամենն արդյունք է լայն լափով նրա կիրառած՝ ինչպես պատմաաշխարհագրական, նույնպես և տնտեսաաշխարհագրական՝ տարածական երևույթների քարտեզագրման մեթոդի»։ Ս. Երեմյանը 1953 թ. ընտրվում է Հայաստանի ԳԱ թղթակից-անդամ և ստանձնում պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնը (1953—1959 թթ.)։ 1963 թ. նա ընտրվում է Հայաստանի ԳԱ ակադեմիկոս և 1965—1968 թթ. վարում ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը։ Ս. Երեմյանը 1964 թ. միջին դարերի, իսկ 1971 թ.՝ հին դարերի պատմության բաժնի վարիչ էր պատմության ինստիտուտում։ Այս տարիներին նրա գիտակազմակերպչական ջանքերի շնորհիվ պատրաստվել են հին հունարենին, ասորերենին, պարսկերենին, արաբերենին և այլ լեզուներին տիրապետող երիտասարդ մասնագետներ, որոնք այժմ առաջատար դեր են խաղում հայ պատմագիտության մեջ։

Ս. Երեմյանը գիտահետազոտական աշխատանքի հետ մեկտեղ շարունակեց իր մանկավարժական գործունեությունը Երևանի բուհերում։ Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական և Վ. Բրյուսովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտներում նա դասավանդում էր հայ և վրաց ժողովուրդների պատմություն և Հայաստանի պատմական աշխարհագրություն։ Անգնահատելի են Ս. Երեմյանի ջանքերը երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում։ Հայ ժողովրդի պատմության և կովկասագիտության տարբեր բնագավառներում նա պատրաստել է բազմաթիվ ասպիրանտներ ու դիսերտանտներ, որոնք այնուհետև պաշտպանել են թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներ։ Ավագ և միջին սերնդի պատմագիտական կադրերից շատերը բախտ են ունեցել շփվելու նրա հետ, գիտական և կյանքի դասեր ստանալու նրանից։ Ս. Երեմյանի գիտական մեծ հեղինակությունը լայն ասպարեզ էր բացում ինստիտուտի երիտասարդ կադրերի համար երկրի խոշոր դիտական կենտրոններում ուսումը և գիտահետազոտական աշխատանքը շարունակելու համար։

Հայագիտական փայլուն կրթության, կովկասագիտական խոր գիտելիքների և հին ու նոր լեզուների հիմնավոր իմացության շնորհիվ, Ս. Երեմյանը ծանրակշիռ ներդրում արեց հայոց հին և միջնադարյան պատմության հիմնահարցերի հետազոտության և գիտական մշակման գործում։ Նրա գիտական հետազոտությունների շրջանակները մեծ ընդգրկում ունեն՝ սկսած հայ ժողովրդի ծագումնաբանությունից մինչև հասուն ավատատիրական հարաբերությունները։ Գիտնականի ուշադրության կենտրոնում առանձնակի տեղ են գրավել պատմական աշխարհագրությանը և քարտեզագրությանը վերաբերող խնդիրները։

Ս. Երեմյանը պատմական քարտեզագրության դիտական խնդիրների մշակման հիմնադիրն է Հայաստանում։ Իր կազմած և հրատարակած հարյուրավոր քարտեզներում նա կենտրոնական տեղ է հատկացրել Մեծ Հայքի պետության տարածքին։ Աշխարհի շատ պատմագիտական կենտրոններում հայտնի են նրա «Հայաստանը ըստ «Աշխարհացույցի» մեծարժեք գիրքը և պատմական քարտեզները։ Ս. Երեմյանի մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ Հայաստանը մանրամասնորեն ներկայացվեց առաջավորասիական պատմական տարածաշրջանային քարտեզներում, որով հայ ժողովրդի պատմական անցյալի տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող ուսումնասիրությունների արդյունքներն ավելի առարկայական դարձան։ Հայ ժողովրդի հին և միջնադարյան բոլոր բնագավառները արտացոլվել են Ս. Երեմյանի ստեղծած պատմական քարտեզներում։

Պատմական քարտեզագրությունը, գործ ունենալով տարածքային հիմնահարցերի հետ, երբ հանդես է գալիս որպես մեկ կոնցեպցիայով գրված բազմադարյան պատմության արտահայտչամիջոց, հետազոտողի առջև քարտեզների դինամիկ շարք ստեղծելու հեռանկար է բացում։ Ահա թե ինչու, Ս. Երեմյանի կազմած յուրաքանչյուր պատմական քարտեզ, անկախ լույս տեսնելու ժամանակից, շարունակությունն է թեմատիկորեն և ժամանակագրորեն նախորդող քարտեզի։ Պատմագիտության մեջ հայ ժողովրդի պատմության Երեմյանական կոնցեպցիան ներառում է դրա

բոլոր հիմնական փուլերը։ Այդպիսի լայն ընդգրկումով է բացատրվում նրա ստեղծած քարտեզների բազմաթեմայնությունը։ Գիտնականի հետազոտությունների ուղին, անցնելով մասնակիից դեպի ընդհանուրը, կամրջում է իրարից հեռու գտնվող դարաշրջանները՝ ընդհանուր շղթայի մեջ գնելով պատմական երևույթներ։ Քարտեզների միջոցով վավերացնելով Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի դարերի խորքից եկող պատմությունը, Ս. Երեմյանը անհնարին է դարձնում հայոց պատմության կեղծարարների բոլոր ճիգերը։ Գիտնականի ստեղծած քարտեզները, բռնելով ժամանակի քննությունը, չափանիշ են դարձել պատմական քարտեզագրության բնագավառում։ Նրա հեղինակությամբ քարտեզներ են լույս տեսել «Հայկական ԽՍՀ ատլասում» (Վանի թագավորությունը և հարևան երկրները մ.թ.ա. VIII—VII դդ., Հայաստանը հելլենիստական ժամանակաշրջանում մ.թ.ա. III—I դդ., Հայաստանը I—IV դդ., Հայաստանը X դ. վերջին և XI դ. սկզբին, Հայաստանը մոնղոլական նվաճումների նախօրյակին, Հայաստանը Ռուսաստանին միավորվելու նախօրյակին (1785—1825) և այլն) (Երևան, 1961), «ԽՍՀՄ պատմության» ակադեմիական հրատարակությունում (Մոսկվա, 1966), «Հին Արևելքի պատմություն» ձեռնարկում (Մոսկվա, 1979)։

Ս. Երեմյանը երբեք չի կարծել, թե իր ստեղծած քարտեզները վերջնական են և վերանայման կարիք չեն ունենա։ Նորը ընկալմամբ գալով գիտության զարկերակը և համընթաց գնալով գիտության զարգացմանը, նա իր յուրաքանչյուր հաջորդ քարտեզը, որը վերաբերում էր նույն թեմային, հագեցնում էր նոր տվյալներով ու հետազոտական արդյունքներով, կատարելով ճշգրտումներ ու սրբագրություններ։ Այսպես, 1980 թ. Ս. Երեմյանը կրկին կազմեց ու հրապարակեց Վանի թագավորության քարտեզը, որտեղ արտացոլվել են հայագիտության և հնդեվրոպաբանության նորագույն տվյալները։ Այդ քարտեզի առանձնահատկությունն այն է, որ, Վանի թագավորության ժամանակաշրջանից լրացի, բովանդակում է տեղեկություններ, որոնք վերաբերում են այն հնագույն ժամանակներին (մ.թ.ա. III—II հազարամյակներ), երբ տեղի էր ունենում հայ ժողովրդի կազմավորումը։ Հիմնվելով Գ. Ղափանցյանի հետազոտությունների վրա՝ դեռևս 1952 թ. Ս. Երեմյանը գրել է. «Ներկայումս կարելի է ապացուցված համարել, որ Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի տարածքում հնագույն ժամանակներից սկսած ապրել են հնդեվրոպական ընտանիքին պատկանող լեզուներով խոսող ցեղերը... Մենք հայերի ծագման պրոբլեմը պետք է ուսումնասիրենք պատմական այն պրոցեսի հիմնական երևույթների ֆոնում, որ տեղի է ունեցել Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղերի շրջանում։ Դա նախնադարյան համայնքի քայքայման և դասակարգային հասարակության ծագման շրջանն էր, երբ բարենպաստ պայմաններ էին ստեղծվել էթնիկական... խոշոր միավորումների գոյացման համար, որը և վերջին հաշվով հանգեցրեց հայ ժողովրդի կազմավորմանը»։ Ս. Երեմյանը իր վերջին հետազոտություններում ավելի խոր համոզվածությամբ էր հակված շեշտելու, որ Հայկական լեռնաշխարհը, լինելով հնդեվրոպական ցեղերի «նախահայրենիքի» հիմնական մասը, հանդիսացավ հայկական ցեղերի հայրենիքը։

Հայ ժողովրդի պատմության հին շրջանին վերաբերող՝ Ս. Երեմյանի հրապարակած քարտեզների հիմքում ընկած են բազմաթիվ ձեռագիր վիճակում գտնվող քարտեզներ, դրանք նրա քարտեզագրական լաբորատորիայի ոսկե ֆոնդն են կազմում։ Միայն դրանց մի քանիսի թվարկումը կարող է պատկերացում տալ, թե ինչ ծանրակշիռ գիտական հիմքերի վրա էին ստեղծվում նրա՝ հրատարակման պատրաստվող պատմական քարտեզները. Հնդեվրոպական լեզուների տարածման շրջանը մ.թ.ա. IV—III հազարամյակներում, Հայկական լեռնաշխարհի ցեղագրական պատկերը մ.թ.ա. III—II հազարամյակներում, Հայկ Նահապետի և նրա սերունդների բնակեցման վայրերը, Առաջավոր Ասիան մ.թ.ա. XVII—XVI դդ., Միտանիի պետությունը, Հայասա-Աղդին և հարևան երկրները մ.թ.ա. XV—XIII դդ., Արևելյան Միջերկրայքը մ.թ.ա. XIII—XII դդ., Մանա երկիրը և մերձուրմյան շրջանները, Գամիրա երկիրը և այլն։

Իր ստեղծագործական կյանքի ընթացքում Ս. Երեմյանը մեծ եռանդով նվիրվեց Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի» հետ կապված՝ մանրակրկիտ ու երկարատև ջանքեր պահանջող աշխատանքին։ Ս. Երեմյանը «Հայաստանը ըստ «Աշխարհացույցի» գրքի և քարտեզի (Երևան, 1963) հրապարակումից հետո ձեռնամուխ եղավ «Աշխարհացույցի» սկզբնական բնագրի վերականգնմանը։ Գիտնականի վերջնական նպատակն էր վերստեղծել բնագիրը և հրապարակել դրա հիման վրա կազմված «Աշխարհի ատլասը՝ Աշխարհացույցը» 15 քարտեզներով, որոնց ձեռագիր վերականգնված նմուշները նա արդեն պատրաստել էր։

Պտղոմեոսի և Անանիա Շիրակացու երկերի՝ Մ. Երեմյանի կատարած զուգահեռ քն-

նությունը պարզեց, որ բացի քարտեզներից, հնարավոր է նաև վերականգնել VII դարում Անանիա Շիրակացու կազմած գլոբուսը։ Հետաքրքիր է գլոբուսի վերականգնման մեթոդը, որը կիրառել էր Ս. Երեմյանը։ Նա որպես ելակետ ընդունել էր Արիստոտելի և Պտղոմեոսի Երկրակենտրոն ուսմունքից բխող երկրի գնդաձևության գաղափարը, որին անվերապահորեն հետևել էր Անանիա Շիրակացին։

Ս. Երեմյանի քարտեզագրական մեթոդը բյուրեղացել էր նրա գիտաստեղծագործական լաբորատորիայում։ Իր մշակած պատմաքարտեզագրական մեթոդով նա ստուգել է իր եզրահանգումները և արծարծված դրույթները, պատկերավոր դարձնելով հետազոտվող գիտական նյութերը։ Նա կատարել է բազմաթիվ հայտնագործություններ և ճշգրտումներ հայկական տեղանունների և դրանց տեղադրության, առևտրական երթուղիների, վարչաքաղաքական բաժանումների, միջպետական սահմանների որոշման և պատմաաշխարհագրական այլ ընդհանուր հարցերի բնագավառներում։ Հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության հիմնական փուլերը օրինաչափորեն արտացոլվել են Ս. Երեմյանի ստեղծած քարտեզներում։ Դրանց հիմքում ընկած են տեսական այն դրույթները, որոնք Ս. Երեմյանը մշակել է հին և միջնադարյան Հայաստանի պատմության ասպարեզում. հայ հասարակության պատմության պարբերացումը, հին Հայաստանի հասարակարգի բնույթը, ավատատիրական դարաշրջանում սոցիալ-տնտեսական և հասարակա-քաղաքական զարգացման ուղիները, ազգային-ազատագրական պայքարի էությունը և այլն։

Կովկասագիտության բնագավառում Ս. Երեմյանի ներդրումը պայմանավորված էր Հայաստանի, Վրաստանի, Աղվանքի, Բյուզանդիայի, Պարթևական և Սասանյան Իրանի ու կովկասյան ժողովուրդների ու ցեղերի պատմության նրա փայլուն իմացությամբ։ Տարբեր երկրների պատմության առանձին հանգուցային հարցեր Ս. Երեմյանը կարողանում էր լուսաբանել այնպես, որ հնարավոր է դառնում խորությամբ ուսումնասիրել դրանց հետ առընչվող այն հիմնահարցերը, որոնք անմիջականորեն կապված էին հայագիտության հետ։ Ս. Երեմյանի գիտելիքները վրացերենի և վրացագիտության բնագավառներում մեծագույնս նպաստում էին նրա կովկասագիտական պրոբլեմներին։

Ս. Երեմյանի պատմագիտական հետազոտությունների արդյունքն են հարյուրից ավել հոդվածները և առավել ևս «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի առաջին և երկրորդ հատորների (1971, 1984) համար գրված բաժինները և կազմած քարտեզները։ Այդ հատորները լույս են տեսել Ս. Երեմյանի գիտախմբագրական ղեկավարությամբ։

Մեծ ուսուցիչ էր մեր սիրելի Սուրեն Տիգրանի Երեմյանը։ Նրա անսպառ գիտելիքներին հաղորդակից էին լինում ոչ միայն հայագետները, կովկասագետները, բյուզանդագետները, իրանագետները, ասորագետները, այլև բոլոր նրանք, ում թանկ էր և հետաքրքրում էր Հայոց պատմությունը և հայ ժողովրդի ճակատագիրը։ Իր հեղինակությամբ և գիտելիքներով նա երբեք չէր կաշկանդում և ճնշում իր աշակերտներին։ Շռայլ էր Սուրեն Երեմյանը իր շրջապատի հանդեպ, այնքան շռայլ, որ իր թողած գիտակտն ձեռագիր ժառանգությունը անհամեմատ գերազանցում է նրա հրատարակած աշխատություններին։ Նա երբեք չէր մտածում ժամանակը հոգուտ իրեն ծառայեցնել։ Թերևս, այս պատճառով նա իրենից հետո թողեց շատ աշակերտներ և քիչ մենագրություններ, սակայն և մեծ թվով անտիպ գործեր։

Խորը վշտով բաժանվելով վաստակաշատ Սուրեն Տիգրանի Երեմյանից, ինձ մխիթարում է այն միտքը, որ նրա ազգանվեր մտավոր կարողության և մարդկային բարության մասին հիշողությունը միավորիչ ուժ կլինի մեր գիտական աշխատանքում՝ հոգուտ հայագիտության և հայ ժողովրդի, որին նա անմնացորդ նվիրված էր մինչև իր կյանքի վերջին պահը։

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Պատմական գիտությունների
դոկտոր